



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 16 ՅՈՒՆԻՍ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն ԿԲԱՐԻՍ ԽՈՐԻԷԼ ԵՆ ԽՍՍԵԼ ԵՆ գործել առաջի քո յամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա ԿԻՍ. ԵՆ ողորմեա քո արարածոց եւ Ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 73

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Իրաւ որ Աստուած բարի է իր ժողովուրդին հանդէպ, անոնց՝ որոնք սրտով մաքուր են:

Ես գրեթէ կորսնցուցած էի հաւատքս, սխալ ֆայլի դիմելու վրայ էի. որովհետեւ նախանձեցայ անօրէններուն,

երբոր տեսայ ամբարիշտներուն յաջողութիւնը:

Որովհետեւ անոնք ցաւ չեն տեսներ, նոյնիսկ մահուան ժամանակ.

մտեղ եւ առողջ է անոնց մարմինը:

Նեղութիւն չունին ուրիշներուն պէս, եւ չեն տառապիր ուրիշ մարդոց պէս:

Անոնց աչքը չարիքէն չի կշտանար,

անոնց միտքը ամբարիշտ խորհուրդներով կը յորդի:

Ծառքանով ու չարութեամբ կը խօսին,

գոռոզ կերպով սպանալիք տեղացներով:

Անոնք կ'ըսեն. «Աստուած ի՞նչպէս պիտի գիտնայ մեր ըրածը»:

Ուրեմն գո՞ւր տեղ ես իմ սիրտս մաքուր պահեցի,

եւ ձեռքերս մեղքի մէջ չթաթխեցի:

Զարչարուեցայ օրն ի բուն, պատժուեցայ ամէն բացուող օրուան հետ:

Եթէ ըսած ըլլայի՝ «Ես ալ անոնց պէս պիտի խորհիմ»,

բու ժողովուրդիդ անհաւատարիմ եղած պիտի ըլլայի:

Այս մասին շատ մտածեցի եւ փորձեցի հասկնալ,

բայց ինձի շատ դժուար թուեցաւ:

Հասկցայ միայն այն ատեն, երբ Աստուծոյ սրբարանը մտայ,

եւ իմացայ ամբարիշտներուն վերապահուած վախճանը:

Արդարեւ, ով Աստուած, դուն զանոնք անդունդին եզրը հասցուցիր,

եւ զանոնք կորուստի մատնեցիր: Ինչպէս պիտի ոչնչանան յանկարծակի,

պիտի ջնջուին, սարսափահար՝ մահուան պիտի մատնուին:

Երագի մը պէս, որ կը չֆանայ՝ երբ մարդ արթննայ,

անոնց պատկերը պիտի չֆացնես ֆաղաֆէդ, ով Տէր:

Մու խորհուրդներովդ զիս կ'առաջնորդես,

եւ ապա փառքով պիտի ընդունիս զիս:

Երկինքի մէջ ո՞վ ունիմ ես քեզմէ գատ,

երկրի վրայ ալ քեզմէ գատ մէկը չեմ ուզեր:

Մարմինս ու միտքս կը տկարանան,

բայց իմ մտքիս յենարանը եւ իմ միակ ունեցաս՝ Աստուած ինք է յաւիտեան:

ՕՐՈՒԿՆ ՆԻԺԹԸ



ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

Յակոբոսի գրած նամակը հաւաքածոյ մըն է ցուցմունքներու, որոնք ուղղուած են «Աստուծոյ ժողովուրդի անդամներուն, որ համայն աշխարհի մէջ ցրուած են»: Հեղինակը, որ Յակոբոս Տեառնեղբայրն է, կենդանի խօսքով եւ վառ պատկերներով ցուցմունքներ կու տայ՝ քրիստոնէական ուղիղ եւ իմաստուն կեցուածք մը ունենալու եւ կեանք մը ապրելու համար: Քրիստոնէական տեսանկիւնէն կը դիտէ կարգ մը հարցեր, ինչպէս՝ հարստութիւն եւ աղքատութիւն, փորձութիւն, պարկեշտ ընթացք, նախապաշարում, հաւատք եւ գործ, լեզուի չափաւորութիւն, իմաստութիւն, վէճ, հպարտութիւն եւ հեզութիւն, ուրիշները դատել, համբերութիւն եւ աղօթք:

Նամակը կը շեշտէ հաւատքին առընթեր այդ հաւատքը գործով արտայայտելու կարեւորութիւնը: Զերմօրէն կը յանձնարարէ նեղութիւններու եւ ցաւերու մէջ համբերող ըլլալ, աղօթքի զօրութեան ապահինիլ եւ հոգեւորապէս իրարու օգնելու աշխատիլ:

Թուականի վերաբերեալ շարք տեղեկութիւն չունինք, միայն թէ ընդունուած է, որպէս առաջին դարուն գրուած նամակ: Բայց ամբողջ միտք բանին

ՆԱՄԱԿԻՆ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

- Նախաբան (1.1):
- Հաւատք եւ իմաստութիւն (1.2-8):
- Աղքատութիւն եւ հարստութիւն (1.9-11):
- Փորձութիւն (1.12-18):
- Լսել եւ գործադրել (1.19-27):
- Ազդարարութիւն խտրականութեան դէմ (2.1-13):
- Հաւատք եւ գործ (2.14-26):
- Քրիստոնէական եւ իր լեզուն (3.1-18):
- Քրիստոնէական եւ աշխարհը (4.1--5.6):
- Զանազան ցուցմունքներ (5.7-20):

Այնպէս ինչպէս Պօղոս Առաքեալ, Պետրոս Առաքեալ, նոյնպէս եւ Յակոբոս Առաքեալ իր նամակը կը սկսի հետեւեալ ձեւով. «Ես, Յակոբոս, Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի ծառան» (1 հմբ): Այս ծառայութիւնը, սակայն, յօժառութեամբ, եւ ոչ որպէս սպրուկ: Ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ Հռոմայեցիներուն նամակին մէջ. «Մեղքի փիրապետութենէն ազատ էք եւ Աստուծոյ ծառաները» (6:22): «Աստուած փրկագնով ձեզ գնեց. մարդոց ծառայ մի՛ ըլլաք» (Ա Կորնթ 7:23):

«Կ'ողջունեն ձեզ՝ Աստուծոյ ժողովուրդին անդամները» բառացի «պասսներկու ցեղերդ»: Որով կը հասկցուին այն քրիստոնէաները, որոնք ծագումով Հրեայ են եւ կ'ապրին Պաղեստինէն դուրս: Բայց պարկեշտութիւն լեզուով՝ անով կը հասկցուին բոլոր քրիստոնէաները, որոնք կը փոխարինեն հին Իսրայէլի 12 ցեղերը եւ Աստուծոյ նոր ժողովուրդը կը կազմեն՝ Եկեղեցին:

«Դուք ձեզ շարք երջանիկ համարեցէք՝ երբ զանազան փորձութիւններու մէջ կ'իճայք» (2 հմբ): Տարօրինակ կը թուի, բայց ճշմարտութիւն մը կայ այս արքայապարտեան մէջ: Յաճախ կ'աղօթենք, որ փորձութեան մէջ չ'իճանք. «մեզ փորձութեան մի՛ փանիր, այլ փրկեան զմեզ ի չարէն»: Իսկ այսպէս Առաքեալը կոչ կ'ուղղէ որ երջանիկ ըլլանք: Ինչպէս կարելի է երջանիկ ըլլալ երբ զանազան փորձութիւններու մէջ կ'իճանք: Քրիստոս այսպէս կ'աղօթէ. «Զեմ ըսեր, որ զիրենք աշխարհէն վերցնես, այլ զիրենք չարէն պահես»:

Կը նշանակէ, փորձութիւն մը, որմէ ոչ թէ փախուսար փալու, այլ Աստուած փալով մեզի շնորհքը որպէսզի մեղքի մէջ չ'ինանք, իսկ երկրորդ, անով՝ որպէսզի կարենանք զանազանութիւնը գիտնալ, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. «Ով որ կաթնկեր է՝ կը նշանակէ թէ մանուկ է, եւ անձնական փորձով չի գիտեր շիրակը սխալէն զանազանել: Մինչդեռ կարծր կերակուրը չափահասներուն համար է, որոնք վարժութեան ճամբով կրթած են չարն ու բարին զանազանելու իրենց զգայարանքը» (Եբր 5:13-14): Առաւել եւս անով օգտագործելու Աստուծոյ փուած շնորհները եւ բացայայտելու այն առաքինութիւնները, որով ձեռք կը ձգենք: Նոյն ուրախութեան մասին Քրիստոս պիտի ըսէ Իր աշակերտներուն. «Երանի՛ ձեզի, երբ մարդիկ նախապէս եւ հալածեն ձեզ, կամ ստելով՝ ձեր մասին ամէն տեսակի զրպարտութիւն ընեն իմ հետեւորդներս ըլլալնուդ համար: Յնձացէք եւ ուրախացէք, որովհետեւ ձեր վարձարտութիւնը մեծ է երկինքի մէջ: Յիշեցէք որ նոյն ձեռով հալածանքի ենթարկուեցան ձեզմէ առաջ ասորոդ մարգարէներն ալ» (Մտք 5:11-12):

Ահա ճիշդ այդ փորձութեան առիթով է որ համբերութիւն պիտի ծնի, երբ ամբողջական հաւաքով ու Աստուծոյ վստահութեամբ այդ բոլորը կը դիմագրաւենք: Իսկ այդ համբերութիւնը մինչեւ վերջ, որովհետեւ յաճախ կրնայ ըլլալ որ ճամբու ընթացքին կարծէք խախտի: Քրիստոս պիտի ըսէ. «Ով որ մինչեւ վերջ համբերէ, ան է որ կը փրկուի»:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէլոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

**Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:**